ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Տնօրեն՝ Ն. Ասատրյան

«15» սեպտեմբերի 2022թ.

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

«Լոռու մարզի Վանաձոր քաղաքի

Ս. Շահումյանի անվան թիվ 6 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

## 5-րդ Բ դասարան

Աղաբալյան Նաիրա Էդուարդի

«2022-2023» ուսումնական տարի

# ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

(դասարանի ընդհանուր բնութագիրը) 2022-2023 ուստարում 5-րդԲ դասարանում սովորում է 24 աշակերտ( 15-ը՝ տղա, 9-ը ՝աղջիկ ); Դասարանում ունենք 1 ներառված աշակերտ՝ Վահան Կիրակոսյան և 1 նորեկ աշակերտ՝ Ներկարարյան Արամ: Կրթական – դաստիարակչական աշխատանքների առանցքում դրված է տարրական օղակից հիմնական օղակ փոխադրված աշակերտների ուսումնական պահանջների բավարարումը, դասարանում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտին հետևելը ; Աշակերտները ունեն բնավորության տարբեր գծեր,խառնվածքի տարբեր տիպեր , որը չի խանգարում միմյանց և ուսուցիչների նկատմամբ լինել հարգալից:

## 2. ՈՒսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում

Ուսումնական տարվա ընթացքում ուսումնադաստիարակչական հիմնական աշխատանքները պետք է ուղղված լինի դասարանի սովորողների միջև հավասար պայմանների ապահովմանը:Պետք է հետևել որպեսզի աշակերտները կատարեն իրենց պարտականությունները,իմանան իրենց իրավունքը,լինեն միմյանց նկատմամբ կարեկից և ընկերասեր:Պետք է հաշվի առնել աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները: Դասղեկական ժամերի ընթացքում կքննարկվեն ուսումնադաստիարակչական բազմաբնույթ հարցեր: Անհրաժեշտ է մշտապես հետևել աշակերտի վարքագծին,օրվա ռեժիմին և դասարանի՝կոլեկտիվ մտածողությանը: Հետևել կարգապահությանը,բացակայությանը՝պարզելով պատճառները:Պարբերաբար իրականացնել դասալսումներ,պարզելու համար աշակերտների ներգրավվածությունը դասապրոցեսին:

## 3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

### 3.1 Հոգևոր դաստիարակություն

Սովորողների հետ զրույցների ընթացքում անհրաժեշտ է ձեռնարկել խոսուն քայլեր , որոնք կնպաստեն երեխայի՝ աղանդավորական շարժումներից զերծ մնալուն:Դասղեկական ժամերի ընթացքում երեխաներին գիտելք հաղորդել

եկեղեցական 5 տաղավար տոների մասին:Աշակերտների մոտ սերմանել բարոյական մաքրություն, սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:

**3.2 Գեղագիտական դաստիարակություն**

Ոչ միայն դասղեկական ժամերի , այլև էքսկուրսիաների,թատրոններ,թանգարաններ,պատկերասրահներ այցելելու միջոցով երեխաների մոտ զարգացնել գեղեցիկի նկատմամբ հետաքրքրություն:

**3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն**

Ուսումնական տարվա ընթացքում միջոցառումների, էքսկուրսիաների միջոցով նպաստել հայրենասեր ու իրավագիտակից քաղաքացու կերտմանը: ՈՒշադրություն դարձնել պետակաշինության հիմքերում գտնվող մեծանուն հայերին,պետական տոներին և հիշատակի օրերին:

**3.4 ֆիզիկական դաստիարակություն**

Մշտապես հետևել սովորողների կեցվածքին,ֆիզկուլտուրայի ժամերին հավուր պատշաճի մասնակցությանը , դասաժամերի ընթացքում աշակերտական գրասեղանի շուրջ նստելու ձևին,ինչպես նաև համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ `կազմակերպելով սպորտլանդիաներ,միջդասարանային մրցույթներ:

**3.5 Աշխատանքային դաստիարակություն**

Դասղեկական ժամերին,ինչպես նաև էքսկուրսիաների ժամանակ զրուցել աշխատանքի կարևորության մասին: Խնամել դասասենյակի ծաղիկները,մասնակցել շաբաթօրյակներին:Աշակերտներին բացատրել,որ չկա այնպիսի աշխատանք որը կարևոր չէ և գնահատման արժանի չէ:

**3.6 Բնապահպանական դաստիարակություն**

Աշակերտների հետ հաճախ զրուցել բնության և շրջակա միջավայրի պահպանության մասին,միաժամանակ բացատրելով,որ մեր կողմից արված յուրաքանչյուր անփույթ քայլ կարող է միլիոնավոր տարիներով վնաս հասցնել բնությանը:

**3.7 Դպրոց ընտանիք կապը**

Ուսումնական տարին մեկնարկելուն պես կազմակերպել ծնողական ժողովներ:Ժողովների ընթացքում կարևորել ուսուցչի և ծնողի համագործակցությունը:Ուշադրություն դարձնել նաև ծնողխորհրդի նախագահի և անդամների աշխատանքին և մյուս ծնողների հետ համագործակցությանը:

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | կատարողներ |
|---|---|---|---|
| սեպտեմբեր | Դասարանի կահավորում, դասասենյակի պատրաստումը սեպտեմբերի 1-ին | Օգոստոսի վերջ | Դասղեկ ծնողխորհուրդ |
| | Դասագրքերի բաշխում | Օգոստոսի վերջ | Դասղեկ գրադարանավար |
| | Գիտելիքի օր | 1.09.22 | Դասղեկ աշակերտներ |
| | 1-ին ծնողական ժողովի անցկացում,ծնողխորհրդի ընտրություն | 2.09.22 | Դասղեկ |
| | Դասարանական,աշակերտական խորհրդի ընտրություն,պարտականությունների բաշխում | 7.09.22 | Դասղեկ աշակերտներ |
| | Կազմել դաստիարակչական աշխատանքի պլան, աշակերտներին ծանոթացնել պլանին , լսել նրանց առաջարկությունը | սեպտեմբեր | Դասղեկ աշակերտներ |
| | Հետևել աշակերտների արտաքին կեցվածքին, հաճախումներին | սեպտեմբեր | Դասղեկ |
| | Ծաղիկների խոնարհում 44 օրյա պատերազմում զոհված հերոսների պուրակում | 27.09.22 | Դասղեկ ծնողխորհուրդ |
| հոկտեմբեր | Կազմակերպել արշավ դեպի բուսաբանական այգի | | Դասղեկ ծնողխորհուրդ |
| | Տարեցների միջազգային օրվան նվիրված բացիկների պատրաստում տատիկ պապիկներին (համագործակցել տեխնոլոգիայի ուսուցչի հետ) | | Դասղեկ տեխնոլոգիայի ուսուցիչ |
| | Հետևել դպրոցում և հասարակական վայրերում աշակերտների կողմից վարքի կանոնների պահպանմանը | | Դասղեկ |
| | Ուսուցչի համաշխարհային օր ,շնորհավորանք ուսուցիչներին | 05.10.22 | Աշակերտներ ծնեղխորհուրդ |
| նոյեմբեր | Զրույց հոգեբանի հետ «Տագնապ, տագնապայնություն» թեմայով | | Դասղեկ ,հոգեբան |
| | Տեղական ինքնակառավարման օր (դասը վարում են աշակերտները) | 10.11.22 | Աշակերտներ դասղեկ |

| | | | |
|---|---|---|---|
| | Այցելություն պատկերասրահ | | Դասղեկ ծնողխորհուրդ |
| դեկտեմբեր | Ծաղիկների խոնարհում 1988 թ.երկրաշարժի զոհերի հուշարձանի մոտ | 07.12.22 | Դասղեկ աշակերտներ |
| | Դասասենյակի ամանորյա ձևավորում | | Դասղեկ աշակերտներ |
| | Ամանորյա ներկայացման դիտում և քննարկում | | Դասղեկ աշակերտներ |
| | Ամանորյա ցերեկույթի կազմակերպում(Secret Santa) | | Դասղեկ աշակերտներ |
| հունվար | 1-ին կիսամյակի արդյունքների ամփոփում | | Դասղեկ |
| | Սպորտլանդիա (համագործակցել ֆիզկուլտուրայի ուսուցչի հետ) | | Դասղեկ ֆիզ.ուսուցիչ |
| | Բանակի օրվան նվիրված կազմակերպել հանդիպում զինվորականի հետ | | Դասղեկ |
| փետրվար | Ծանոթացում եկեղեցական տոներից Տեառնընդառաջին ,այցելություն Վանաձորի Սրբ.Նարեկացի եկեղեցի | | Դասղեկ աշակերտներ ՀԵՊ ուսուցիչ |
| | Նշել մայրենի լեզվի օրը ,համագործակցել հայոց լեզվի ուսուցչի հետ | | Դասղեկ հայոց լ-ի ուսուցիչ |
| | Թումանյանի ծննդյան օրը մասնակցել գրքի տոնին | | Դասղեկ աշակերտներ |

# ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| Ուսումնական շաբաթներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | կատարողներ |
|---|---|---|---|
| մարտ | Ծաղիկների խոնարհում Վ Սարգսյանի արձանի մոտ | 05.03.23 | Դասղեկ աշակերտներ |
| | Կանանց միջազգային օրվան նվիրված բացիկների պատրաստում | | Դասղեկ ,տեխն. ուսուցիչ |
| | Դասասենյակի գարնանային ձևավորում | | Դասղեկ, աշակերտներ |
| | Ջրի համաշխարհային օր : Ացելություն Վանաձորի ջրի մաքրման կայան | 22.03.23 | Դասղեկ ,ծնողխորհուրդ |
| ապրիլ | Մայրության և գեղեցկության օր: Երգի նվիրում մայրիկներին | | Դասղեկ աշակերտներ երգի ուսուցիչ |
| | Կինոդիտում և քննարկում «ԹԹենի» հայֆիլմ | 16.04.23 | Դասղեկ աշակերտներ |
| | Ապրիլի 24-ին այցելություն եկեղեցի 1915 թ.զոհերի հուշարձանին ծաղիկների խոնարհում | 24.04.23 | Դասղեկ աշակերտներ |
| | Մասնակցություն համապետական շաբաթօրյակին | | Դասղեկ աշակերտներ |
| Մայիս | Աշխատավորների միջազգային օրը : Զբոսանք Վանաձորի տեսարժան վայրերով | 01.05.23 | Դասղեկ աշակերտներ |
| | Այցելություն 1941-1945 թթ զոհերի հուշարձանին | 09.05.23 | Դասղեկ աշակերտներ |
| | Տարեվերջյան էքսկուրսիայի կազմակերպում դեպի Հայաստանյան որևէ տեսարժան վայր | | Դասղեկ աշակերտներ ծնողխորհուրդ |

# ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

| Անցկացման օրը | Դասղեկի անցկացման միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությանը | ծանոթություն |
|---|---|---|
| 07.09.22 | «Ո՞վ եմ ես»թեմայով զրույց | կատարված է |
| 14.09.22 | «Ինչպիսի՞ն եմ ես»թեմայով զրույց | կատարված է |
| 27.09.22 | 44-օրյա պատերազմի հերոսները | կատարված է |
| 05.1022 | «Բոլորս տարբեր ենք, բոլորս ապրում ենք միասին» | |
| 12.10.22 | «Լավ է երբ… վատ է երբ …» բանավեճ | |
| 19.10.22 | Պահպանենք մեր շրջակա միջավայրը | |
| 02.11.22 | Բոլորս տարբեր ենք և արժանի ենք հարգանքի | |
| 09.11.22 | Համացանցի վտանգներն ու առավելությունները | |
| 16.11.22 | Կոնֆլիկտների հաղթահարում | |
| 23.11.22 | Գեղեցիկը իմ ընկալմամբ | |
| 30.11.22 | Համագործակցող դասարան | |
| 07.12.22 | Երկրաշարժն ու նրա աղետալի հետևանքները | |
| 14.12.22 | Իմ պատասխանատվությունը ընդհանուր գործի համար | |
| 21.12.22 | Ամանորյա հրաշք | |
| 11.01.23 | Ի՞նչ է ընկերությունը և բարեկամությունը | |
| 18.01.23 | Ո՞վ է իմ ընկերը | |
| 25.01.23 | Ինչպիսին պետք է լինի զինվորը | |
| 01.02.23 | Ի՞նչ է ազնվությունը | |
| 08.02.23 | Ժպիտը մարդու կյանքում | |
| 15.02.23 | Հետաքրքրությունը լավ հատկանիշ է թե վատ | |
| 22.02.23 | Ի՞նչ են սովորոցնում մեզ Հ.Թումանյանի հեքիաթները | |
| 01.03.23 | Գարուն է գալիս , դռները բացե՛ք | |
| 15.03.23 | Դպրոց՝ ուսման դարբնոց | |
| 22.03.23 | Եկե՛ք զրուցենք | |

| | | |
|---|---|---|
| 05.04.23 | Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները | |
| 12.04.23 | Վնասակար սովորություններ | |
| 19.04.23 | Աշխատասիրություն,հարգանք յուրաքանչյուր տեսակի աշխ.նկատմամբ | |
| 26.04.23 | «Մենք բոլորս անմոռուկ ենք….» զրույց | |
| 03.05.23 | Մեծերը և փոքրերը | |
| 10.05.23 | Մայիսյան հերոսամարտեր | |
| 17.05.23 | Արդարացի և անարդար արարքներ | |
| 24.05.23 | Այս ուսումնական տարվա ձեռքբերումներն ու բացթողումները | |